

# ԸՆՏԱՆԻՔԻ ԴԻՐԸ ԵՐԵՒԱՅԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

## Ա. Կ. ՆԱԶԱՐՅԱՆ

Երիտասարդությունը հասնելով աշխատունակ տարիքի՝ կատարում է իր կյանքում առաջին ինքնուրույն քայլերից մեկը, որն այնքան վճռորոշ նշանակություն է ունենում նրա հետագա ողջ կյանքի համար: Այդ մասնագիտության ընտրությունն է, որը մի կողմից մարդու զարգացումն ուղղում է որոշակի հուն, մյուս կողմից հնարավորություն է տալիս ընդգրկվելու հասարակական արտադրության մեջ, դառնալու սոցիալապես լիարժեք էակ: Ընտրության այդ պատասխանատու պահին նախորդում է ինքնորոշման երկար ուղին, որը շարունակվում է նաև ընտրությունից հետո: Մասնագիտական կողմնորոշման այդ ողջ պրոցեսում անձի ինքնորոշման վրա ազդում են մի շարք գործոններ, որոնք նախապատրաստում են անձի ընտրությունը, նպաստում նրա կայունացմանը: Ըստ ազդեցության՝ ընտանիքն առաջին տեղում է գտնվում այդ գործոնների շարքում, իրենից հետ թողնելով անգամ դպրոցին, որի ֆունկցիաներից մեկը աշակերտներին մասնագիտության ընտրության նախապատրաստելն է: Նման եզրակացության հանգելու համար հիմք են ծառայում մեր մասնակցությամբ իրականացված մի շարք կոնկրետ սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները<sup>1</sup>: Մասնագիտության իրենց ընտրությունը պայմանավորող գործոնների շարքում հարցվածները հիմնական տեղը հատկացնում են ծնողների և ազգականների խորհրդին: Այսպես, 1981 թ. հետազոտության ժամանակ հարցվածների 55 %-ն է նշել ծնողների և ազգականների խորհուրդը՝ որպես մասնագիտության իրենց ընտրությունը որոշող գործոն, 1982 թ. հետազոտության ժամանակ՝ 44 %-ը, 1983 թ. հետազոտության ժամանակ՝ 69 %-ը, 1986 թ. հետազոտության ժամանակ՝ 41 տոկոսը<sup>2</sup>:

Ընտանիքի ազդեցությունը երեխայի մասնագիտական կողմնորոշման վրա դրսևորվում է երկու ձևով՝ երբ երեխաները յուրացնում են աշխատանքի, իրենց մասնագիտության նկատմամբ ծնողների վերաբերմունքը, և երբ ծնողները միջամտում են իրենց երեխաների ինքնորոշմանը, խորհուրդներ են տալիս, երբեմն նույնիսկ նրանց փոխարեն ընտրություն կատարում: Երկու դեպքում էլ մեծ դեր են խաղում ծնողների սոցիալական դրությունը, կրթական մակարդակը, նրանց մասնագիտությունը, ընտանիքի նյութական ապահովվածության չափը և այլն: Այն փաստը, որ ընտանիքը, հատկապես ծնողները, մեծ դեր են խաղում իրենց երեխաների մասնագիտական կողմնորոշման գործում, ունի իր ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերը: Դրականն այն է, որ երեխաները ցանկացած պահի, ցանկացած իրադրության համար ունեն խորհրդատուներ, որոնց օգնությանը նրանք կարող են ապավինել: Սակայն մյուս կողմից մասնագիտության ընտրության վերաբերյալ իրենց երեխաներին խորհուրդ տալիս ծնողները հաճախ ելնում են ոչ թե նրանց հակումներից ու ընդունակություններից, ոչ թե հասարակության շահերից, այլ իրենց պատկերացումներից, իրենց արժեքային կողմնորոշումներից: Հետևաբար նրանց կողմնորոշիչ գործունեության արդյունքները երբեմն հակասում են հասարակության ակնկալումներին: Օրինակ, կոնկրետ սոցիոլոգիական հետազոտությունները վկայում են, որ դեպի մտավոր աշխատանքը ընդհանուր կողմնորոշվածության պայմաններում մասնագետ-ծառայողների երեխաներն ավելի մեծ միտում ունեն ընտրելու այդ ոլորտի մասնագիտություններ, վերարտադրելու իրենց ծնողների սոցիալական խումբը, և դրանում իրենց մեղքն ունեն ծնողները: 1984 թ. Երևան քաղաքի հիմնարկ-ձեռնարկությունների 2050 աշխատողների սոցիոլոգիական հարցման ժամանակ, երբ նրանց առաջար-

<sup>1</sup> 1981 թ. հետազոտվել են Երևանի 26 կոմիսարների շրջանի միջ. դպրոցների 400 շրջանավարտներ, 1982 թ.՝ Երևանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի և ռադիոֆիզիկայի ֆակուլտետների բոլոր դիմորդները, 1983 թ.՝ ԵՊՀ 3—5-րդ կուրսերի 700 ուսանողներ, 1986 թ.՝ ՀՆՍՀ միջ. դպրոցների 1400 ութերորդ դասարանցիներ:

<sup>2</sup> Հարցին կարելի էր տալ միաժամանակ մի քանի պատասխան, այդ պատճառով թվերը մեծ են:

կեցինք պատասխանել, թե կցանկանալի՞ն, որ իրենց երեխաները կատարեն այնպիսի աշխատանք, ինչպիսին իրենք են կատարում, պատասխաներն, ըստ հարցվածների կրթական մակարդակի, այսպես դասավորվեցին.

	բարձրագ.	թերի բ. և միջ. մաս.	միջնակ.	ութամյա և տարրակ.
Այո	46,0	33,2	25,3	22,7
Ոչ	45,3	60,4	70,4	72,2
Դժվարանում են պատասխանել	8,1	6,4	4,3	5,1

Չնայած բարձրագույն կրթությամբ ծնողների մեծ մասը ժխտական պատասխան է տվել հարցին, այնուամենայնիվ նկատվում է ընդհանուր օրինաչափություն. կրթական մակարդակի բարձրացմանը զուգահեռ աճում է նրանց թիվը, ովքեր իրենց աշխատանքը խորհուրդ կտային իրենց երեխաներին: Ընդ որում, նկատվում է, որ ծնողները տվյալ դեպքում ելնում են լավ մասնագիտության մասին իրենց պատկերացումներից, որովհետև երբ նույն այդ հետազոտության ժամանակ հետազոտվողներին հարցրեցինք, թե իրենց երեխաներին ի՞նչը խորհուրդ կտային հաշվի առնել մասնագիտության ընտրության ժամանակ, այսպիսի պատասխաններ ստացանք՝ պայմանավորված հարցվածների սոցիալական դրությամբ:

	բանվորներ	մասնագ.- ծառ.
1. Բարձր եկամուտ ստանալու հնարավորությունը	18,4	12,9
2. Չրջապատի ծանաչումը ձեռք բերելու հնարավորությունը	13,4	7,4
3. Հասարակության օգտին աշխատելու հնարավորությունը	20,7	22,5
4. Հետաքրքիր աշխատանքով զբաղվելու հնարավորությունը	41,6	46,9
5. Մարդկանց ղեկավարելու հնարավորությունը	7,4	3,0
6. Բարձր դիրք գրավելու հնարավորությունը	11,5	5,4
7. Բարիքների բաշխմանը մոտ գտնվելու հնարավորությունը	4,1	0,9
8. Հասարակական հրատապ խնդիրների լուծմանը ավելի ակտիվ մասնակցելու հնարավորությունը	4,4	4,1
9. Ստեղծագործական կարողությունների իրականացման հնարավորությունը	8,1	25,2
10. Բարենպաստ պայմաններում աշխատելու հնարավորությունը	9,5	5,6
11. Հակումներն ու ընդունակությունները	6,2	7,3
12. Այլ պատասխան	6,6	4,3

Մասնագիտության ընտրությունն անձին ոչ միայն պրոֆեսիոնալ գործունեության հնարավորություն է ընձեռում, այլև պայմաններ է ստեղծում գրավելու որոշակի սոցիալական դիրք հասարակության սոցիալական կառուցվածքում: Այս գործոնն իր կիսքն է դնում անձի մասնագիտական կողմնորոշման վրա: Երբեմն մասնագիտության ընտրությունը միջոց է որոշակի սոցիալական դիրքի գրավման համար: Նման դեպքերում հետազոտողները խոսում են ընդգծված սոցիալական կողմնորոշման մասին, երբ անձին հետաքրքրում են ոչ թե մասնագիտության համապատասխանությունը հակումներին, նրա հետաքրքիր լինելը և այլն, այլ նրա օժանդակ ատրիբուտները՝ աշխատավարձի հնարավոր չափը, զբաղեցվելիք պաշտոնը, հեղինակությունը և այլն: Վերևի աղյուսակում բերված տվյալները վկայում են, որ բանվորների համար ուժեղ է սոցիալական, իսկ մասնագետ-ծառայողների համար՝ մասնագիտական կողմնորոշումը: Ցավալին այն է, որ ծնողները շատ քիչ են հաշվի առնում երեխաների հակումներն ու ընդունակությունները, ինչն այնքան կարևոր է մասնագիտության ընտրության ժամանակ: Այս տեսանկյունից երեխայի մասնագիտական կողմնորոշման վրա իրենց ազդեցությամբ էականորեն տարբերվում են դպրոցը և ընտանիքը: Դպրոցում երեխայի մասնագիտական կողմնորոշման ձևավորման ժամանակ ելակետը նրա հակումներն ու ընդունակություններն են, ընտանիքի համար՝ իր վերարտադրության կոնկրետ պայմանները: Դպրոցի ազդեցությունը վերահսկում ու կառավարում է հասարակությունը, իսկ ընտանիքի ազդեցությունը հիմնականում ընթանում է տարերայնորեն և դժվար է ենթարկվում կառավարման: Չնայած երեխաներն ավելի հաճախ են հետևում ծնողների խորհրդին, այնուամենայնիվ «...նպատակահարմար է, որ առաջատար տեղ զբաղեցնի դպրոցը, այլ ոչ թե ընտանիքը, քանի որ հենց այնտեղ են ուսումնասիրվում շրջանավարտների անհատական հատկանիշները»<sup>3</sup>:

<sup>3</sup> Г. Г. Бажутин, Э. Н. Журавлева. О соотношении социальной и профессиональ-

Պարոցում ուսուցումը համակարգված ու կազմակերպված բնույթ է կրում, ընտանիքում՝ տարերային, այնքան, որքան թույլ են տալիս ընտանիքի անդամների գիտելիքները, փորձն ու հմտությունը: Ահա թե ինչու ընտանիքը երեխաների գիտելիքների յուրացման, հետևաբար և կրթության բնագավառում նրանց հնարավորությունների միջև տարբերությունների խորացման միտում է առաջացնում, այնինչ դպրոցն աշխատում է այդ տարբերությունները վերացնել, բուլրին օժտել հավասար հնարավորություններով:

Դեռևս դպրոցում սովորելու պահին ուսման շարունակման պլանի դեպքում եական տարբերություններ են նկատվում շրջանավարտների մտադրությունների միջև, պայմանավորված ծնողների սոցիալական դրությամբ և կրթական մակարդակով: Օրինակ, որքան ծնողների կրթական մակարդակը բարձր է, այնքան փոքր է միջնակարգ-մասնագիտական և պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատություններում սովորել ցանկացող երեխաների թիվը: Դրան հակառակ կտրուկ ավելանում է բարձրագույն կրթություն ստանալ ցանկացող երեխաների թիվը: Եթե միջնակարգից ցածր կրթություն ունեցող ծնողների երեխաների մեջ այն կազմում է հարցվածների 64 %-ը, ապա բարձրագույն կրթությամբ ծնողների երեխաների մեջ՝ 93 %-ը:

Սոցիալիստական հասարակությունում փակ սոցիալական խմբեր չկան, մի խմբից անցումը դեպի մյուսը ոչ մի եական դժվարություն չի ներկայացնում, սակայն ծնողների կուլտուր-կրթական մակարդակը, սոցիալական դրությունը լրացուցիչ խթան են ծառայում հաջող սոցիալ-պրոֆեսիոնալ կարիերայի համար: 1984 թ. Երևան քաղաքի բանվոր-ծառայողների հետազոտությունը ցույց տվեց, որ եթե մինչև հարցման պահը բարձրագույն կրթություն էին ստացել տարրական և միջնակարգ կրթությամբ հայրերի երեխաների 12,8 %-ը, միջնակարգ մասնագիտական և թերի բարձրագույն կրթությամբ հայրերի երեխաների 17,8 %-ը, ապա բարձրագույն կրթությամբ հայրերի երեխաների՝ 46,3 %-ը: Ընդ որում, եթե ցածր կրթական մակարդակ ունեցող ծնողների երեխաները բարձրագույն կրթությունն ստացել էին կյանքի տարբեր հատվածներում, ապա բարձրագույն կրթությամբ ծնողների երեխաների հիմնական մասը բարձրագույն կրթությունը ստացել էր ինքնուրույն կյանքի հենց ելակետում: Այդ երեխաները հետագայում աչքի էին ընկել նաև սոցիալ-պրոֆեսիոնալ առաջընթացի արագությամբ:

Բարձրագույն կրթություն ստանալու ուղղությամբ հնարավորությունների իրականացման ժամանակ բարձրագույն կրթությամբ ծնողների երեխաները ոչ միայն քանակական առավելություն են դրսևորում (հավասար պայմաններում նրանցից ավելի շատ են ընդունվում բուհ), այլև իրենց մյուս հասակակիցների համեմատ դրսևորում են որակական առավելություն, որը հանդիսանում է դպրոցում սովորելու տարիներին գիտելիքների յուրացման ժամանակ ձեռք բերած առավելության նյութականացումը: Բուհերի ընդունելության քննությունների ժամանակ նրանք ավելի հաճախ են հաղթող դուրս գալիս մրցույթից, համեմատաբար ավելի բարձր արդյունքներով են ընդունվում: Ձեռքի տակ եղած տվյալները ավելի ակնառու են դարձնում նշված երևույթը:

Ինչպես է ընդունվել բուհ

սոց. ծագումը	բուհում	փոս. դիս.	ընդ. մրց.	մրց. դրսևոր. : մեծությամբ	ը լիզիտ.	դրոսի Կ	դրոսի Ը
Բանվոր	0,3	3,1	17,6	10,6	66,3	2,2	100 %
Կոլտնտեսական	0	4,0	13,6	10,4	68,0	4,0	100 %
Մասնագ.-ծառայ.	1,3	7,8	29,3	11,3	48,0	2,0	100 %

Եթե այս արդյունքների հետ նկատի ունենանք նաև, որ բուհեր ընդունվել են դիմած բանվորների երեխաների 22,1 %-ը, կոլտնտեսականների երեխաների 17,6 %-ը և մասնագետ-ծառայողների երեխաների 38,4 %-ը, ապա միանգամայն պարզ կլինի, թե ինչպիսի էական տարբերություններ կան տարբեր ընտանիքներից սերած երեխաների կրթական հնարավորությունների միջև: 1984 թ. ԵՊՀ ընդունվել են դիմած բանվորների երեխաների 32,5 %-ը, կոլ-

ной ориентации молодежи в развитом социалистическом обществе. В сб.: Теория и практика профессиональной работы с молодежью. Пермь, 1978, вып. 3, с. 11.

\* Հետազոտությունն անցկացվել է 1977 թ.՝ պրոֆ. Գ. Տ. Խրլոպյանի ղեկավարությամբ: Ուսումնասիրվել են Երևանի բուհերի 1969—77 թթ. 10645 դիմորդների գործերը:

տնտեսականների երեխաների 29,7 %-ը և մասնագետ-ծառայողների երեխաների 56,5 %-ը: 1985 թ. այդ թվերը կազմել են համապատասխանաբար՝ 29,8 %, 25,3 % և 45,2 %:

Այսպիսով, ընտանիքն իր ազդեցությամբ տարերայնորեն հակադրվում է պետության գործունեությանը՝ սոցիալական արժեքների բաշխման ոլորտում արդարության հաստատմանը: Ընտանիքը հանդես է գալիս որպես երեխայի կրթության ու դաստիարակության լրացուցիչ օղակ: Այս առումով որքան մեծ պոտենցիալով է օժտված երեխայի ընտանիքը, այնքան նըպաստավոր են պայմանները կրթության ու մասնագիտության ձեռքբերման համար:

Սոցիոլոգիական հետազոտությունները վկայում են, որ երեխայի մասնագիտական կողմնորոշման և ընդհանրապես նրա սոցիալ-պրոֆեսիոնալ կարիերայի գործում ծնողների դերը միանշանակ չէ: Սոցիոլոգիական գրականության մեջ արդեն ընդունելություն է գտել այն փաստը, որ կրթության ոլորտում պլանների իրականացման ժամանակ մոր կրթական մակարդակն ավելի էական դեր է խաղում, քան հորը<sup>4</sup>: Մեր հետազոտությունների ժամանակ պարզվեց, որ երեխայի մասնագիտական կողմնորոշման տարբեր փուլերում ծնողների ազդեցությունը տարբեր է: Երեխայի պլանների և ծնողների կրթական մակարդակների միջև սերտ կապը ցույց տվող գործակցի տարբեր արժեքները վկայում են, որ մինչև աշխատանքային գործունեության սկիզբը գերակշռում է մոր, իսկ աշխատանքային գործունեություն սկսելուց հետո՝ հոր ազդեցությունը: Հավանաբար այդ նրանից է, որ ընտանիքում դեռևս երեխաների դաստիարակության ու կրթության նկատմամբ հսկողության գործը իրականացնում է մայրը, իսկ հայրերը սկսում են նրանցով զբաղվել, երբ նրանք արդեն չափահաս են դառնում: Այսպիսով երեխայի սոցիալ-պրոֆեսիոնալ կարիերայի մեջ հավասարապես դեր ունեն ծնողներից երկուսն էլ: Հենց այս փաստը նկատի ունենալով՝ Լ. Յա. Ռուբինան առաջարկում է ուսանողության սոցիալական ծագումը հաշվի առնել նաև մայրական գծով<sup>5</sup>:

Երեխայի մասնագիտական կողմնորոշման վրա ընտանիքի ազդեցությունը մեծապես պայմանավորված է աշխատանքի նկատմամբ ծնողների վերաբերմունքով: Մասնագիտությունների հետ երեխայի առաջին ծանոթությունն սկսվում է ծնողների և ընտանիքի մյուս չափահաս անդամների զբաղմունքների մասին տեղեկանալով: Նա իր աշխատանքային մկրտությունը հաճախ ստանում է ընտանիքում՝ տնային տնտեսության մեջ ծնողներին օգնելիս: Նրանց հետ մշտական հաղորդակցման ընթացքում երեխան հաճախ յուրացնում է աշխատանքի, իրենց մասնագիտության նկատմամբ ծնողների վերաբերմունքը: Երեխան սկսում է որոշ մասնագիտություններ տարբերակել մյուսներից, նրա մոտ ձևավորվում է համապատասխան արժեքային կողմնորոշում, որի հիման վրա նա սկսում է գնահատել և ըստ գրավչության դասակարգել իրեն ծանոթ մասնագիտությունները: Որքան շատ են ընտանիքի չափահաս անդամների սոցիալապես ընդունելի արժեքները, այնքան մեծ է հավանականությունը, որ երեխան կստանա ծիշտ կողմնորոշում, որովհետև «ընտանիքի ավագ անդամների արժեքային կողմնորոշումները, նրանք աշխարհայացքները և համոզմունքները... իրենց կնիքն են դնում աճող մարդու անհատականության վրա: Այդ պատճառով տվյալ ընտանիքի անդամների շահերը որքան լրիվ են համընկնում հասարակական շահերին, տվյալ ընտանիքում որքան լայն են յուրացված հասարակական հարաբերությունների դրական բաղադրիչները, այնքան բազմակողմանի կլինի նրա դրական ազդեցությունը երեխաների վրա»<sup>6</sup>:

Դեռ փոքր հասակում իրենց խառերի ժամանակ երեխաները հաճախ ընդօրինակում են ավագներին՝ այս կամ այն պրոֆեսիոնալ դերը կատարելիս: Սոցիալիզացման հետ մեկտեղ ընդօրինակման այդ հատկությունը թուլանում է, և մեծանում է պրոֆեսիոնալ դերերի կատարմանը ընտրողաբար մոտենալու ունակությունը: Սակայն կյանքում քիչ չի պատահում, երբ պրոֆեսիոնալ գործունեության ասպարեզում երեխան հետևում է ծնողներից մեկին: Ժամանակակից երիտասարդությանը հատուկ է մղումը դեպի ակտիվ, ստեղծագործական աշխատանքը: Գաղտնիք չէ, որ դեռևս մտավոր աշխատանքի ոլորտի մասնագիտությունները ստեղծագործելու համար ավելի լայն հնարավորություններ են ընձեռում. քան ֆիզիկական աշխատանքի ոլորտի մասնագիտությունները: Իսկ «ստեղծագործելու համար որքան լայն հնարավորություններ է ընձեռում ծնողների այս կամ այն պրոֆեսիան, այնքան մեծ է մեր պայմաններում ծնողների և երեխաների զբաղմունքների ժառանգական կապը»<sup>7</sup>: Մեր հետազոտությունների ժամանակ նույնպես արձանագրվեց այս երևույթը: Երեխայի կողմից ծնողներից մեկի մասնագիտության ընտրության փաստը առավել հաճախ դիտվում էր մասնագետ-ծառա-

<sup>4</sup> *Sb'ya* III. Шонисматулов, Н. Ақобиршоев. Семья и социально-профессиональная ориентация молодежи. В кн.: Социально-профессиональная ориентация молодежи в условиях развитого социализма, М., 1977:

<sup>5</sup> *Sb'ya* Л. Я. Рубина. Советское студенчество, М., 1981, էջ 57:

<sup>6</sup> В. Д. Попов. Образование, личность, общество: Опыт социол. комплекс. исслед., Саратов, 1979, с. 139.

<sup>7</sup> В. Н. Шубкин. Выбор профессии в условиях строительства коммунизма,—Вопросы философии, 1964, № 8, с. 23.

յողների ընտանիքներում: Ընդ որում, հետազոտությունների արդյունքները վկայում են, որ մասնագիտություն ընտրելիս երեխաներն ավելի հաճախ հետևում են հայրերին, քան մայրերին: Օրինակ, դպրոցների շրջանավարտների հետազոտության արդյունքների վկայությամբ, եթե մոր մասնագիտությունը ընտրել էր շրջանավարտների 9 %-ը, ապա հոր մասնագիտությունը ընտրել էր հարցվածների 15 %-ը: Երեխայի՝ ծնողներից որևէ մեկի մասնագիտության ընտրության ժամանակ նկատվում է ծնողների չափազանց ընդգծված ակտիվությունը, նրանց անմիջական միջամտությունն ընտրության գործընթացին: Այսպես, ծնողների և ազգականների խորհրդով մասնագիտություն ընտրած շրջանավարտների 34 %-ը ընտրել էր Ձը-նողներից որևէ մեկի մասնագիտությունը: Ընդ որում, հոր խորհրդով մասնագիտություն ընտրած շրջանավարտների 49 %-ը ընտրել էր հոր մասնագիտությունը, այն դեպքում, երբ մոր խորհրդով մասնագիտություն ընտրածների 27 %-ն էր ընտրել մոր մասնագիտությունը: Ըստ նույն հետազոտության արդյունքների՝ ծնողների խորհրդին հետևելու ավելի մեծ ցանկություն էին հայտնել տղաները, քան աղջիկները՝ համապատասխանաբար 65 % և 52 %: Երեխաների՝ ծնողներից որևէ մեկի մասնագիտության ժառանգման դեպքում համեմատաբար լավ նախադրյալներ են ստեղծվում մասնագիտության արագ ու հաջող յուրացման համար, երեխան ավելի հեշտ է հարմարվում մասնագիտության պահանջներին և աշխատանքային պայմաններին, ծնողների աշխատանքային փորձը յուրատեսակ դպրոց է նրանց համար, իսկ ծնողները՝ ամենաշահագրգռված ուսուցիչները: Պրոֆեսիոնալ գործունեության որոշ կողմեր ուղղակի փոխանցվում են երեխային, ընտանիքում մշակվում են որոշակի ավանդույթներ, որոնք կարգավորում են ընտանիքի երիտասարդ անդամների պրոֆեսիոնալ գործունեությունը և վարքը: Սակայն մյուս կողմից ծնողների մասնագիտության ժառանգումը երիտասարդության մի մասի համար նվազեցնում է որոշ մասնագիտությունների ձեռքբերման հնարավորությունը: Նոսքը մտավոր աշխատանքի ոլորտի մասնագիտությունների մասին է: Ջանի որ նման մասնագիտությունների տեր ծնողների երեխաների հնարավորությունները նույն ասպարեզում գերադասելի են (ինչպես ցույց տրվեց վերևում), հետևաբար միատեսակ պլանների առկայության դեպքում նրանք ավելի շուտ կիրակաձյացնեն իրենց պլանները: Օրինակ, բժիշկ դառնալու համար նախադրյալներն ավելի բարենպաստ են բժշկի, քան բանվորի երեխայի համար: Ընտանիքի այդ անցանկալի ազդեցությունը նվազեցնելու համար հասարակությունը պետք է ակտիվացնի դպրոցի, ինչպես նաև երեխայի մասնագիտական կողմնորոշմամբ զբաղվող մյուս պաշտոնական օղակների պրոֆ-կողմնորոշիչ գործունեությունը, այն տանի սոցիալապես ցանկալի հունով: Մյուս կողմից այն պետք է աշխատի հավասարակշռել տարբեր ընտանիքներից սերած երեխաների հնարավորությունները ոչ թե մասնագիտության ընտրության պահին՝ մի մասի համար ստեղծելով արտոնյալ պայմաններ, այլ դրանից շատ առաջ, մասնագիտական կողմնորոշման սկզբնական փուլում:

**А. К. ХАЧАТРЯН—Влияние семьи на профориентацию ребенка.—**В статье на основе данных конкретно-социологических исследований прослеживается влияние семьи на формирование и реализацию социально-профессиональных представлений и устремлений детей.